



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 20.01.16 թ.
Ելք № 004

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ չնայած հարկային ոլորտում իրավակիրառական գործընթացում առկա խնդիրների, հարկ վճարողները հաճախ ձեռնպահ են մնում ուղղակի դիմել և իրենց հարցադրումները ցանկանում են ներկայացնել հասարակական կազմակերպությունների միջոցով:

Այդ կապակցությամբ կից ներկայացվում է հարկ վճարողի գրությունը և խնդրում ենք պարզաբանել բարձրացված հարցերին:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Համաձայն Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածի վերջին պարբերության՝ 2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Շրջանառության հարկով հարկվող կազմակերպությունը ծառայություն է մատուցել օտարերկրյա իրավաբանական անձին, որի գծով պետք է դուրս գրի արտարժույթով արտահայտված հաշվարկային փաստաթուղթ: Առկա պայմաններում կազմակերպությունը չի կարող օգտվել ժամանակավորապես թույլատրված «Արտադրանքների, ապրանքների առաքման հաշիվ ապրանքագիր» էլեկտրոնային ձևից, քանի որ այն նախատեսված չէ օտարերկրյա անձին դուրս գրելու և արտարժույթով ծառայության գին որոշելու համար: Պատճառը նույն Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածում ամրագրված բացառությունն է՝ կապված ապրանքների արտահանման դեպքերի հետ, որի ժամանակ կազմակերպությունը պետք է հաշիվը գրի թղթային տարբերակով:

Միաժամանակ, ՀՀ Կառավարության 04.06.2015թ-ի N 594-Ն որոշման համաձայն՝ թույլատրվում է միայն ապրանքների մատակարարման ժամանակ և այն էլ՝ կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերում այլ ուղեկցող փաստաթղթի դուրսգրումը: Այսինքն, որևէ գործող կարգ չկա կապի կամ ծրագրային համակարգի խափանման պատճառներից տարբերվող պատճառներով էլեկտրոնային փաստաթղթին փոխարինող ծառայության մատուցման այլ հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու վերաբերյալ:

Արդյոք կազմակերպությունը օտարերկրյա անձին ծառայությունների մատուցման հաշիվը պետք է բացառապես դուրս գրի էլեկտրոնային եղանակով: Եթե այո, ապա ինչպես դուրս գրել նման հաշիվ, եթե սահմանված ապրանքների առաքման էլեկտրոնային ձևում հնարավոր չէ տեխնիկապես օտարերկրյա անձին ամբողջական վավերապայմաններով և արտարժույթով արտահայտված հաշիվ գրել: